

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2005թ. հունվար-ապրիլի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2005թ. հունվար-ապրիլին կազմել է 358362.6 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 108.0%` 2004թ. հունվար-ապրիլի 109.3% համապատասխան ցուցանիշի դիմաց:

ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2005թ. հունվար-ապրիլին կազմել է 111435 դրամ, կամ 237.2 ԱՄՆ դոլար:

ՀՆԱ-ի արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

	Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ		ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետով)		ՀՆԱ-ի կառուցվածքը	
	հունվար-ապրիլ					
	2004	2005	2004	2005	2004	2005
Ընդամենը, բազային ճյուղեր այդ թվում`	109.1	105.4	6.1	3.5	65.6	65.3
արդյունաբերություն	107.5	101.6	2.2	0.4	28.0	28.1
գյուղատնտեսություն	106.8	101.7	0.7	0.2	10.0	9.3
շինարարություն	115.9	123.9	1.0	1.6	6.7	8.3
տրանսպորտ և կապ	112.3	111.8	0.8	0.7	6.3	5.8
առևտուր և հանրային սնունդ	109.8	104.1	1.4	0.6	14.6	13.8
Ընդամենը, այլ ճյուղեր	117.1	110.3	3.1	2.2	20.8	20.0
ՀՆԱ-ն հիմնական գներով	110.9	106.6	9.2	5.7	86.4	85.3
Ապրանքների (արտադրանքի) զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	100.4	116.8	0.1	2.3	13.6	14.7
ՀՆԱ-ն շուկայական գներով	109.3	108.0	9.3	8.0	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

	Հունվար-ապրիլ	
	2004թ.	2005թ.
Համախառն ներքին արդյունք	100	100
ապրանքներ	44.9	45.9
ծառայություններ	41.5	39.4
ապրանքների (արտադրանքի) զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	13.6	14.7